աման շինող կին գյուղում մի քանիսն էին անուն հանած լինում, որոնք և հրավիրվում էին ուրիշների տները։ Դա համարվում էր իրենց շնորհքի հանդեպ մեծարանք։ Մի բարձր պղնձե կամ նույնիսկ կավե աման շուռ տալով՝ նրա ոտքի վրա այդ կինը ծեփում էր նախ ապագա ամանի հատակը և ապա վերցնելով կավ պատրաստող կնոջից մի կազմն՝ օղակաձև կպցնում էր այդ հատակին և հմտությամբ ձեռքով բարակացնում։ Այդ առաջին օղակի վրա նա շարում էր հաջորդաբար երկրորդ, երրորդ և այլ օղակները, իրար կպցնելով, երկու թաթերով դրսից և ներսից սեղմելով, պատերը բարակացնելով և դեպի վեր քաշելով։ Ամանին անհրաժեշտ կանոնավոր կլորություն տալու համար նա շարունակ պտտվում էր ամանի շուրջը և միշտ մատները թաթախելով ջրի մեջ և ամանի կողերին հուպ տալով ներսից և դրսից՝ տալիս էր կողերին ցանկալի հաստություն ու ձև և մակերեսի ողորկություն, ըստ հարկավորության դիմելով հատուկ փայտիկի օժանդակության։ Երբ ամանը վերջնականապես ձևավորվում էր, նա մի բարակ պարանով հատակը կտրում էր պատվանդանից և դնում չորանալու, բայց ոչ արևի տակ։ Լավ չորացած ամանը զետեղվում էր թօռօնի մեջ և թրծվում։

Թօռօնն էլ կինն էր շինում. միայն Գորիս քաղաքում դրա համար հրավիրվում էր բրուտը։ Թօռօնի համար ավելի հաստ կազմէր էին գլորվում։ Թօռօնի հատակը չէր շինվում։ Աշխատողը կանգնած էր լինում հորի մեջ և կազմէրը հարկ-հարկ օղակաձև շարում իրար վրա, երեսները հարթեցնում և կողերը վեր քաշում, առանց շտապելու, որպեսզի ստորին շարքերը բավական չորանան և կարողանան պահել վերը դասավորվող օղակների ծանրությունը, որոնց հաստությունը երբեմն հասնում էր 8—10 սմ։ Երբ կողերը լավ չորանում էին, միայն այն ժամանակ մեջը վառում էին ուժեղ կրակ, որով և թօռօնը թրծվում էր հենց շինված տեղում։

Երբ տանն աման էր պատրաստվում կամ թօռօն, տան մանկական աշխարհի համար ուրախություն էր լինում, թե՛ նրանք իրանք և թե՛ մեծերը նրանց համար ծեփում էին խաղալիքներ՝ սուլիչներ, կճուճիկներ, խնոցյակներ, տիկնիկների գլուխներ... Այս ամենն էլ ամանների հետ միասին թրծվում էին թօռօնի մեջ։

Զանգեզուրի պըռւտնէրի չարխը՝ բրուտների դուրգը, սովորական ձևի էր լինում։ Նա բաղկացած էր երկու անիվ սեղաններից, որոնք մի առանցքի վրա էին հաստատված և առանցքի մի ծայրով գետնի մեջ ցցված։ Վերին սեղանը փոքր էր, ստորին սեղանը՝ մեծ՝ ոտներով պտտեցնելու համար։ Բայց այստեղ չարխը մեծ մասամբ տեղավորվում էր հորի մեջ, այնպես, որ ամանֆաշօղը նստում էր հորի պռունգի մոտ՝ գետնին։ Գորիսի բրուտներն աշխատում էին քարայրերի մեջ. ոչ հեռու ֆըռատկնէրից հողի մեջ շինված է նրանց փօռնը՝ փուռը, քուրան, որտեղ և էրմ ըն՝ այրում են ամանները։ Հետզհետե նույն վարպետները սկսել էին շինել նաև ջրմուղի խողովակներ՝ միլէր։

Զանգեզուրցի պըռւտն էլ, երբ նրան հարցնում էին շինած ամանների թիվը, ճիշտ չէր պատասխանում և աշխատում էր նրանց պաշտպանէլ չար աչքի ազդեցությունից։

ՓԱՅՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Կավեղեն ամանների հետ մրցում էին փայտից շինած ամանները՝ զանազան մեծության թաֆնանէրը, խմորի և լվացքի տաշտերը, խնօցինէրը։ Փայտից էին շինում գդալամանները, խօնչանէրն և տէփօրինէրը, շերեփներն ու